




ԿԻՉՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կոմարի» թերթի հավելված

1991 թ. 09 ՈՍՏՈՍ, № 41: ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.



Լուսանկարները՝ Ա. ՄԱԿԱՐՅԱՆԻ

ԼԵՆԻՆԱՎԱՆԻ ԲՈՒՈՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

ՅԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ, քաղաքի բնակչությանը պարեմային ապրանքներով առավել կազմակերպված ապահովելու նպատակով սննդամթերքների բաշխումը կատարվում է՝ հետևյալ հասցեներով.

1. Արդյունաբերության աշխատողների համար՝ իրենց ձեռնարկություններում:
2. Տրանսպորտի և կապի աշխատողների համար՝ № 2 ԱՏՁ-ում (Կալինինի պող.):
3. Ծինարարության բնագավառի, կապալառու կազմակերպությունների և գազային տըն տնտեսության շահագործման աշխատողների համար՝ «Լենին» տրեստի շենքում (Կիրովաբաղյան փողոց):
4. Ժողկրթության բնագավառի, կուլտուրայի, ստորջապահության աշխատողների համար՝ № 7 դպրոցում (Օստումյան փողոց):
5. Ապաստարկման ոլորտի (առևտուր և կենցաղային ըսպասարկում) և կոմունալ տըն տնտեսության աշխատողների համար՝ շինարարների մշակույթի տանը (Օստումյանի անվան գրոսայգի):
6. Մուկովյան շրջանի այն բնակիչների համար, որոնք 1988 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ոչ մի տեղ չեն աշխատել՝ տեքստիլ կոմբինատի ակումբի մարզադահլիճում:
7. Ծիրակի շրջանի այն բնակիչների համար, որոնք 1988 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ոչ մի տեղ չեն աշխատել՝ Սկյանի անվան ակումբում (Կայարանամերձ հրապարակ):
8. Զինծառայողների ընտանիքների համար՝ գինատում:
9. Գետակազ Ռիմարկների աշխատողների, ինչպես նաև թոշակատուների համար՝ № 2 երաժշտական դպրոցում:
10. Աղմի՛խատրատիլ մարմինների աշխատողների համար՝ ՆԳ վարչության շենքում:
11. Երեխաների համար սնունդամթերքները և արդյունաբերական ապրանքները բաշխվում են հոր աշխատավայրում, իսկ քաղաքային ղեկավարում մեր աշխատանքի վայրում:

ԿԱԶՄԱՍՄԻՏԵ
(1988 թ-ի դեկտեմբեր)

1988. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 7 ԱՐՆԱԿԻՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ



Հուսանկարները՝ Ս. ԳՈՒԼՅԱՆԻ

Ա ր և Վ ի

Ո Ղ Ք

Երեկ է, իրիկնամուտ—
Արեգակն իր կիսախավար
Ու կիսամութ
առանձնատան
Նեղ անկյունում
կարկամելով
Արարվածի

ծանրությունից,
Կատարվածի դառնահարք
Լուս կույ տալով,
Խունկ է ծխում
Փլուզումից նահատակված
Նեղյալների հիշատակին:

Երեկ է, իրիկնամուտ—
Արեգակն իր
Շեղ վրանի
Նեղ անկյունում,
Մահն է ողբում
Համատարած...

Ձմեռ է ու բուր
Եվ համին ստույգ
Կամակատաբ
Հիշաչար ու բուր
Մութ հիշողության,
Որ հայտնվում է
Անբիծ-թծավոր
Անգիծ-գծավոր
Հրամանագրով—

Կախս ուժասպառ,
Թախում անվերայ
Հոգու հուսաբեկ
Հոգեւոր փեղկերին,
Որտեղ նեղվածք
Նստված է տվել
Ու այդ դաշվածից
Քարեղեն մի բոց,
Քյուրավոր անկոց,
Ու ցավի զեզոց,
Կանգից զրկված
Ճերմակ պարանոց,
Կտորած ու խոց...
...Եվ այլափոխված,
Կողմ-կողմի շարված
Անճանաչ դիրք՝
Կապտած, անաշուն,
Անզույն, անհագույն,
Անբաղ ու անշունչ,
Անճայտ, անմտուչ,
Քարածեծ բիրբեր,
Քարացած կապեր...
...Որտեղ անտուն կա՝
Անտեր, աննավատ,
Որտեղ մի աբր կա,
Այբի, բերհավատ,
Թող գան, միանան,
Միասին ըմպեն
Գառնաբյան գավաթ,
Որ գոնե մի պան,
Կիթ մի ակնբարբ
Ազատագրվեն,
Իսպառ զրկվեն
Կորեքաթ, անգուր,
Հիշաչար ու բուր
Հիշողությունից,
Որ հայտնվում է
Անգիծ-գծավոր,
Անբիծ-թծավոր
Շարագրանկով...

ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱՍՏՅԱՆ



ԹԵՅՄՈՒՐԱԶ ՉԻԿՎԱԶՆԻ
ԸՆՏԱՆԻՔԸ

Վրաստանում էր ծնվել
Թեյմուրազը Գորի քաղա-
քում: Ասկայն ճակատագիրը
նրան բերել էր մեր քաղաքը:
Այստեղ նա ծանոթացել էր
իր կյանքի ընկերուհու՝ ԱՌԿԱ
ԱՌԱՔԵԼՅԱՆԻ հետ, ամուս-
նացել: Աշխատում էր №
2884 ավտոշարասյունում որ-
պես վարորդ: Կարճ ժամա-
նակում սովորեց հայերեն
լեզվով խոսել, կարողացավ
արժանանալ կոլեկտիվի ու
ընկերների հարգանքին:

Ծնվեցին երեխաները՝ Գի-
անն, Դավիթը, Զոհրապը:
Նոր բնակարան ստացան
Բուլվարային փողոցի վրա-
Ընտանիքի երջանկության
համար ոչինչ չէր պակա-
սում: Վրա հասավ մեծ ար-
հավիրքը՝ երկրաշարժը: Հանդ
վեց հնամենի Գյումրին,
խորտակվեցին ճակատագրե-
րը... Երիտասարդ ընտանի-
քի կենսագրությունը ընդհատ
վեց: Հիմազն մնացին փյա-
տակների տակ: Միայն Զոհ-
րապի կնիքը փրկվեց, որին խնա-
մով է Արդայի տարեց մադ-

րը:
ԴԱՆԱ ԵՎ ԴԱՎԻԹ
ՉԻԿՎԱԶՆԻ
Ինչ երջանիկ օր էր,
պահ, որ գնացին Ակար-
վելու՝ երեխաները միասին,
հետո ամուսինները առան-
ձին: Ինչ իմանային, որ
հաջորդ լուսանկար չի լինե-
լու, որ կյանքը այնքան կարճ
էր ու տխուր: Գիանն ան-
չափ խեղդ ու քարի աղջիկ
էր: Այնպես էր սիրում մազ-
րիկին ու կարված նրա հետ,
որ սևադեղնաբերան, երբ առա-
ջին անգամ դարոց գնաց,

շարունակ լաց էր լինում, նը-
րան էր ուզում, նա ինչ ոչ
բանով տարբերվում էր երե-
տաներից դասընկերներից, վե-
կայում էր ուսուցչուհին, ան-
չափ փխրում սիրտ ուներ,
գերազանցիկ էր: Երկրորդ
դասարանցիներից միայն Գի-
անն գոհվեց: Եվ հիմա,
երբ անցյալ ժամանակով
ենք խոսում փոքրիկի մա-
սին, անչափ ծանր է: Երի-
տասարդ ընտանիքի լուսա-
նկարները մեղադրանք են
քննությանը, որը ոչ մեկին
չիմանց...



Ընդամենը 22 տարի ապրեց
ԳԱՅՆՆԵ ԱՐԵՐՏԻ ՆԱԶԱԹ
ՅԱՆԸ: Մասնագիտությամբ
մանկավարժ էր, երազում էր
սերունդ կրթել, դաստիարակել:
Քաջ ճակատագիրը այլ բան
էր պատրաստում: Ծակատա-
գիր, որից անմասն չմնաց
ամուսինը՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՌԱԶՄԻԿԻ ՆԱԶԱՐԵՅԱՆԸ:
Վերջինս հինգ տարի պայմա-
նագրով ծառայում էր Չեխոս-
լովակիայում: Այնտեղ էլ 1988

11 ՇՐՐՈՒ ԿՈՂՐ-ԿՈՂՐԻ

թվականի մայիսի 18-ին ծըն-
վեց նրանց ստաջենիկը՝ ՀԱՍ-
ՄԻՎԸ: Վերջինս ճանաչում էր
օրորոցին խոնարհված մոր
գորովագուր դեմքը, ծախտով
արձագանքում փաղարշանքնե-
րին, անմեղ հրեշտակի նման:
Երկու տարի արձակուրդ չէր
վերցրել Հովհաննեսը: Հայրենի
քի ու հարազատների կարտուղ
կանչում էր նրան:
1988 թվականի դեկտեմբերի
1-ին երիտասարդ ընտանիքը
հայրենի քաղաքում էր ար-
դեն՝ հայրական տանը: Ի՞նչ
ուրախություն էր հարազատնե-
րի համար: Ուրախ ու վերջին
հավաք այդ տանը, վերջին
հանդիպումը Հովհաննեսի ըն-
տանիքի հետ:
Այն ահավոր վայրկյաննե-
րին, երբ ցնցվեց Շիրակացի

փողոցի բարձրահարկերից մե-
կը, ճող հարկի բետոնասաղե-
րի արանքում սեղմված 12
ժամ մնաց Հովհաննեսը՝ մի
ձեռքով ամուր բռնած սիրելի
Գայանեի անօգնական ձեռքը:
12 ժամ շարունակ նա հույս
էր տալիս մանկամարդ կնոջը,
որ դիմանա, որ շուտով կը-
փրկվեն, որ օգնության եկած
մանր ձայնը ելն լսվում:
Կնոջ ձեռքը անտիճանաբար
սառեց ամուսնու ափերի մեջ:
Ընտանիքի 11 անդամներից
փրկվեց ողբերից ծանր վիրա-
վոր Հովհաննեսը միայն, քայք
չդիմացավ ծանր վիրահատու-
թյանը, ու 11-րդ օրը հավերժ
փակեց իր աչքերը: Այսօր 11
շիրիմ կա կող-կողի՝ ոչ թի-
լոր լուսանկարներով, 11 ան-
մեղ զոհեր:



ԼՈՒՍԱՆՎԱՐԸ ՉԻ ԵՐԻԱՆՈՒՄ...

ԼՍՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ
ընդամենը քսանինը տարե-
կան էր, նա էլ իր ուրույն
աշխարհն ուներ, իր ընտա-
նիքը, երեխաները, նրանցով
էր սպրում, հպարտանում,

կյանքին ուրախ աչքերով նա-
լուս: Ծնվել էր նա Դուկաս-
յանի շրջանի Մուսայելյան
գյուղում: Աչք էր բացել ու
տեսել էր գյուղի աշխատավի-
րին, որը քրտինքով իր հա-

ջըն էր վաստակում: Տեսել
էր առավոտյան դաշտ շտա-
պող մարդկանց՝ գերանդիմե-
րը ուսած և երեկոները հոգ-
նարկ տուն վերադարձող
ձնողներին: Դարոցն ավարտե-
լուց հետո ԼՍՄԱ ընդունվեց
Ա. Մուսայելյան անվան ման-
կավարժական ուսումնարա-
նը: Միշտ էր ընտրել մասնա-
գիտությունը: Դասվարի՝ քա-
րի սերմնացանի գործը վա-
ղուց էր հմայել: Միտում էր
փոքրիկ սաներին: Շուտով
ընտանիքը կազմեց: Երկու ե-
րեխայի մայր էր: Ապրում էր
խաղաղ ու հանգիստ՝ գոհ
աշխարհից ու մարդկանցից:
Մեծը ԼԴԻԿՆ էր (ԱՍՍ-
ՎԵՂԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ), սո-
փորով էր Մաշտոցի անվան
դպրոցում: ՔՐԻՍՏԻՆՆԻ՝ նույն
պես: Միայն էին դասի գնում
ու գալիս: Ընդամենը մեկ

տարով էր փոքր եղբորից:
Մայրիկի հետ նրանք երկու
նույն փողոցով դեռ երկար
կրայելին, երև աղետ չլինել:
Միտում էին երգել, պարել,
մայրը մեծ հույսեր էր կա-
պել իր քաղկենի հետ, որ
անպաճման երաժիշտ կդառ-
նան... Իսկապես, նպում ե՞:
Նրանց և ուզում եմ հարցնել,
թե ի՞նչ էին ուզում դառնալ:
Ախտո, որ այս լուսանկարը
երբեք չի ծերանալու, որ նը-
րանք չեն պատասխանելու
իմ հարցին... որ մայրը չի
ստանալու նրանց երջանկու-
թյունը, նրանք՝ մորը: Հավա-
տացած եմ, չէին դիմանա
ստանց մեկնելու:
Կնոջ և զավակների ողբեր-
գական մահվան վիշտը 2 տա-
րի անց գերեզման տարով
նաև ընտանիքի հորը:
ՍՈՒՍԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՈՒՅՈՒՅՈՒՆ ԱԴԱՄՅԱՆ

Նա ապրեց ընդամենը 83 տարի և թողեց բարի անուն ու անմոռանալի հիշողություն: Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի շրջանավարտը 1948 թ. Ելանակ վեց Արթիկի շրջանի Փանիկի ենթաշրջանի տեղամասացին անասնաբուժարանի վարիչ, հետագայում՝ Լենինական քաղաքի գլխավոր անասնաբույժ, իսկ որոշ ժամանակ աճյ՝ շուկայի ստուգման կայանի թժչուրի:

Մեծ գեղաստանի մայր էր Հայաստանը, ընդգծված տակտի տեր, խորաբանաց ու հավասարակշռված անձնավորություն: Ան սամման բարի էր, անձնագրո՞ւ ու գիշոր: Նա անզուգական բարեկամ էր, կյանքի հավատարիմ ընկեր, լավագույն խորհրդատու: Անհուճորեն նվիրված էր իր երեխաներին ու թոռներին:

Ոչ որ չկարողացավ օգնել, հասնել նրան: Երկրաշարժից յոթ օր հետո միայն գտնվեց սիրելի թոռնիկի՝ Վահեի հետ միասին և հողին հանձնվեց:

ՎԱՀԵ ԱՇՈՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սիրելի, անզուգական Վահիկ, թեև մոր էր լրացել ինը տարի, բայց կարծես մեծացած ու փոքրացած լինեիր. խաղաղ էիր, համզատ, մտքը ու ընդունակ: Ամենաընդունակը՝ մեր երեխաներից: Սովորում էիր գերազանց գնահատականներով: Գու ռեճիկը նախասիրությունների ու հետաքրքրությունների լայն շրջանակ: Մշտապես թերթում էիր հանրագիտարաններ ու տեղեկատվություն, երբեմն տալիս էիր պլանիսի հարցեր, որոնց առանց մտածելու հնարավոր չէր պատասխանել: Սիրով էիր սպորտ, արվեստ, գրքեր, գիտելի աշխարհի ու երկրի սպորտային բոլոր սատարին:

Օրհնորում նկարում էիր ու նկարում...Ավաղ, լռել է քո ձայնը, ոչ գալիս ես, ոչ խոսում: Գուցի՞ ճեղացել ես մեզմից, որ չկարողացանք փրկել մատաղ կյանքը...



ԳՈՂԱՐ ՄԻՇՐԱՆՅԱՆ

Իմ սիրելի ընկերուհի, դեժ վար է հաշտվել այն մտքի հետ, որ դու այնչև չկաս, որ քո երեխաները մեծանում են առանց մոր գորգորանքի ու փառաքանքի: Ապրեցիր ընդամենը 29 գարուն:

Ծնվել է 1959 թ., գերազանցությամբ ավարտել Հ. Թումանյանի անվան N 13 միջնակարգ դպրոցը: Երազում էր ուսուցչուհի դառնալ: Աշխատում էր գույլա-նա-կեղծի ա/մ որպես քանվորուհի: Ամուսնացել էր, ուներ իր օջախը, խաղաղ ընտանիքը: Մոր մահը մեծ վիշտ պատճառեց նրան: Գեհալը սպասում էր էրեխայի. ցանկանալով հավերժացնել մոր անողը: Կատարվեց երազանքը, ծնվեց փոքրիկ Նինան: Բայց Գեհալից իր փոքրիկ Նինայի հետ մնաց ծննդատան փրատակների տակ: Ներանք տու՞ր չվերադարձան, որտեղ անհամբերությամբ ըս պատում էին նրանց:

Մ. ԳԻՐԳՈՐՅԱՆ



ԿԱՐԻՆԵ ԲԱՐԿՆԵՆԻ

ՋՈՒՂԱՐՅԱՆ

(ծնվել է 1956 թվականին)

Ցավով եմ գրում այսօր իմ ամենամոտ ընկերուհու՝ Կարինեի մասին, Մոտենում էր ավարտական տարվա վերջը: Իմ ձեռքով նրա անվան դիմաց նշեցի նախանշ գլուխը. եկատի ունենալով սեզի մոտիկությունը: Աշխատեց Կարինեն մեծ նվիրումով, անմեղքորով: Ամուսնացավ, տեղափոխվեց Սպիտակ: Ինչպես էին նրան սիրում տանը և զգրոցում: Եստ կարճ ժամանակում նա վատանկեց գերազանցիկ ուսուցչի պատվով: Կոչումը, Հիշում եմ, թե ինչ հպարտությամբ էր շտապում Կարինեի գասածանիքին՝ հիվանդությունից վաղ ձեռքացած ուսուցչուհի մայրը՝ ընկ. Ջուլիարյանը: Գրք վար է ասել, թե կփրկվե՞ր Կարինեն, եթե մեք լենինականում: Հայրենի քաղաք վերադարձան նրա երկու զավակները, որ հրաշքով փրկվել էին մանկապարտեզի փլատակներից: Վերադարձան առանց Կարինեի, առանց մայրիկի: Այդպիսին էր նախատագիրը:

Մ. ՍԱՎԴԱՆՅԱՆ



ՄԻ ԹՈՂԵՔ, ՈՐ ՄԵՌՆԵՄ

Վերջին քսանըրը մնացին օդում, մնացին նրան փրկությունների հիշողություններում: Կանչում էր ամուսնում, մյուսներին, խնդրում շուտ օգնեն իրեն, հասնեն...

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ ԱՂԱՍՏԻ. ծնված 1961 թ. Լենինականում: Համեստ, մարշալու ու շնորհալի մի աղջիկ, որ զոհ դարձավ աղետին: Մի աշխարհ էլ պակասեց, մի մայր էլ որը թողեց իր փոքրիկներին: Աշխատում էր մա գույլեղենի արտադրական միավորումում. N 1 արտադրամասում: Երկրաշարժի օրը լրացել էր նրա հետծննդան արձակուրդը և առաջին անգամ մա նորեն գործի շտապեց, չնայած վատ էր զգում և տանցիները հազար անգամ խնդրեցին, որ չգնա: Իսկ մա գնաց...

Մի շարված օրերում մայրը թողնելու էր իր երեք փոքրիկ, դեռ աշխարհի չարն ու բարին չհասկացող, մայրական գորգորանքին սպասող երեխաներ: Նոր բնակարան էին ստացել, բնակարանամուտ էին տոնելու: Ինչպիսի սպասում ու հրճվանք կար արտասարդ կնոջ հոգում, հավատ ու սեր սրտում: Առանց այդ էլ անուրախ մանկություն էր ունեցել: Ժամանակից շուտ զրկվել էր մորից ու հորից, և իր ողջ սերը պահել գավակների համար: Աստված սա էլ շատ համարեց:



ԲՈՐԻՍ (ՄԻՇԱ)

ՍՈՒՐԵՆԻ ՂԱՐԻՑՅԱՆ

Արդեն երրորդ տարին է, ինչ գավակները իրենց սիրելի հորը տեսնում են միայն քրտակարով: Կարոտում ու թախծում են, իսկ ամենից շատ՝ զգում նրա խնայի խոր հուղանքի կարիքը: Հայր... ինչպես էր կտրված գավակներին, ինչպես էր հարատուանում նրանցով, մեծ հույսեր փայփայում: Որդու անուսնացնելու նպատակ ուներ և անհամբերությամբ սպասում էր այն երջանիկ օրվան, երբ պակիկ կդառնա ու մեքքը բռնած դուրս կգա փողոց՝ ի ցույց ամենքի: Հուզվում էր նույնիսկ մտածելուց ու... ըս պատում: Զարն ավելի շուտ եկավ ու... տարավ նրան անվերադարձ: Վիշտ կա սրտերում գավակների, հարազատների, ծխացող վերք:

Ծնվել է 1935 թվականի հունիսի 1-ին Լեռնականում, բանվորի ընտանիքում: 14 տարեկանից աշխատել է շինարարությունում՝ ինկելով իր գործի վարպետը: Որպես էր իր ընտանիքով, իր 3 գավակներով: Նրան սիրում էին, հարգում նաև կոլեկտիվում: Փոխվում էին կոլեկտիվները, բայց մնում էր նրա քառի անունն ու պատիվը: Երկու ամիս անհամբերությամբ հետ հարազատները նրան գտան Օժրակի գերեզմանոցում:



ՀՈՎԻԿ ԼԵՎՈՆԻ ՄԻՇՐԱՆՅԱՆ

Իմ ոսկեմազիկ, իմ փոքրիկ Հովիկ, եթե միայն գիտեմաս, թե որքան դժվար է առանց քեզ: Մտնում եմ սեմ լակո, նայում քո ծալազող նկարին, և մտովի լսում զողանող ծիծաղը: Բայց դա միայն թվում է, հաջորդ վայր կյանքի վերադառնում եմ սը խոր իրականությանը: Ծնվեց 1988 թվականի հունիսի 17-ին: Ինձանից երջանիկ սրտակի չկար, ինչ անհամբերությամբ էի սպասում քո ծննդին, իմ փոքրիկ: Ընդամենը վեց գարուն ապրեցիր: Սիրում էիր արև, ջուր, կապույտ երկինք: Հաճախում էիր գույլա-նախկեղծի ա/մ մշակույթի սեսեստի պարի խմբակը: Որքան էի ուզում տեսնել քեզ բեմադրալակի վրա: Նախօրին հիվանդանոցում էինք՝ հայրիկից մուտ: Չէիր ուզում տուն գալ: Համզեղից, թե մաղն էլ կզատ հիվանդանոց: Ավա՞ղ, այդ մա որ քեզ տարավ հավիտ, անմոռությամբ:

ԼՐ. համասարանները բաժանվեցին:



ՄԱՆՐ ՈՒ ԱՂՋԻԿ

Երիտասարդ էր ու գեղեցիկ իմ սիրելի ընկերուհին, ծնվել է 1951 թ. ապրիլի 4-ին: Սովորել է N 28 դպրոցում, ավարտելուց հետո աշխատել Լենինականի կառույցի ֆարիկայում: 17 տարվա փորձ ուներ Մարզոմ, սիրված ու հարգված էր կոլեկտիվում, կազմակերպիչ էր հավաքությունների, ուրախությունների: Նրա հետ էր աշխատում սիրելի աղջիկը՝ Ան ՆԱՆ, որ ծնվել է 1968 թ. հունվարի 12-ին, սովորել N 8 դպրոցում: Սիրում էր երգերաժառանգությունը: Մալայն չը հաջողվեց Աճալից սովորել այդ նյութում, և մա ընդունվեց պոլիտեխնիկում՝ տեխնոլոգիական բաժինը՝ միաժամանակ աշխատելով մոր հետ: ԱՍՏՂԻԿ ՀՈՎԱՆԵՆԻՍՅԱՆ



ՅՈՒՆԻՍԱՆ ՌՈՒԲԻՆԻ

ԹԱԴԵՎՈՅԱՆ

Ծնվել է 1971 թ. Կոմայրիում, բանվորի ընտանիքում: Գերազանց գնահատականներով ավարտեց N 15 միջնակարգ դպրոցը, իսկ 1987-ին ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտ: Սիրով ծուշան աղպես էին քեզ անվանում հարազատները ու քարեկամները: Բոլորի կողմից սիրված էիր և գուցե դա էր պատճառը, որ միշտ անկեղծ էիր, որպես, սրամիտ ու մարդասեր: Ծննդանոց օրը՝ հունվարի 28-ին պետք է կարճատև ճանաչություն: Մա կայն ամեն ինչ փուլ կկավ, շրջվեց մեկից: Բեզ գտան աղետից երեք օր անց: Գեղեցիկ էիր. ինչպես ջրաշուշանը:



ԳԱՑԱՆԵ ՍԱՐԳՍԻ

ԳԵՏՈՐՈՅԱՆ

Ծնվել է 1975 թվականին, Լենինականում: Գալանեց հավերժ մնաց Բ. Ղարիբջանյանի անվան N 9 դպրոցի 8-րդ «Ա» դասարանի աշակերտուհի: Կարոտում էր առանց հոգանելու, մի տեսակ ազատություն: Գրքերի աշխարհը Գալանեի հոգու աշխարհն էր: 7-րդ դասարանի փոխադրական ընտանիքում ավարտից հետո, երբ ծնողները հավաքվել էին իրենց երեխաների գնահատականները իմանալու, հայրը լեզվի և գրականության ուսուցչուհի Ա. Սահարայանը հուզված նկատեց. «Գալանեց այնպես պատասխանեց, որ հիացմունքից շտապում եմ...»:

ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂ ԶՈՆ



ԳՈՒՀԱՐԻԿ ԽՈՐԵՆԻ ԱՌԱՔԵՆՅԱՆԸ ծնվել է 1953 թ. ապրիլի 15-ին: Դպրոցը ավարտելուց հետո ընդունվել է Հասկի գյուղատնտեսական սովխոզ-տեխնիկում: 1972 թ. ավարտել է, ստացել հաշվապահի որակավորում: Մինչև աղետը աշխատում էր «Գյուղըն» միավորումում որպես հաշվապահ:



Վաղաժամ կորցնելով մորը, նրա կյանքը եղել է տուտապալի: Տառապանքով են անցել երիտասարդական տարիները: Հետագայ կյանքից 35 տարի չլրացած, իր հետ տանելով

քրոջ որդուն՝ ԱՐԹՈՒՐՈՒՆ, որին սիրում էր կյանքից առավել:

Դեռ չէր բոլորել աշխույժ, ծիծաղկոտ ու ժպտերես ԱՐԹՈՒՐ ԱՐՏՅՈՒԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 5 տարին: Նա շատ էր սիրում մորաքրոջը: Գեկտեմբերի 7-ին լրանալու էր քույրիկի 1 տարին: Կարծես թե ճակատագրի դատը թեքումով զուգորդվելու էին ծննդյան և մահվան օրերը: Ուրախությունը փոխվեց սգի, դառնալով կորստյան անդառնալի ցավ:

Երկրաշարժից 4 օր անց, նրանց գտան գրկախառնված:



ՈՐԲԻ ԲԱՆՏԸ

Բախտի շար խաղ էր գուցե, որ այդ օրը աշխատանքի չգնաց էլեկտրատեխնիկական գործարանի 2-րդ արտադրամասի աշխատակցուհի ՍՈՒՍԱՆՆԱՍԱՐԳՅԱՆԸ (ծնվ. 1954 թ.):

Նա իր հարկի տակ հյուրընկալել էր քրոջ՝ Օսանայի ընտանիքին: Զրուցում էին մեծերը՝ ինքը, քայլում ու փեսան՝

Սամվելը, ուրախ ճովողում էին նրանց զավակներն ու իր սիրալից բախկները՝ ԱՐՄԱՆՆՈՒ ԱՆԱՀԻՏԸ:

Ինչ իմանալից նրանք, որ աղետ էր սպառվում և որ բոլորի կյանքի թելը կտրվելու էր նույն պահին:

Մտանցում անվորակների մահն դպրոցից տուն էր թերեւտ առաջին դասարանի աղջնակին՝ Զարմին, որի հուշերում մինչև կյանքի վերջը կպահպանվի քարի ու գթասիրտ մոր կերպարը, աշխույժ ու գանգրաձեր եղբոր՝ ԱՐՄԱՆԻ (ծնվ. 1988 թ.) քաղցրահունչ երգը, մանկապարտեզ հաճախող քույրիկի՝ ԱՆԱՀԻՏԻ (ծնվ. 1984 թ.) մանրիկ աչիկների փայլը:

Որք էր սեծացել ընտանիքի հայրը՝ Յուրիկ Վարդանյանը: Կարճատև եղավ նա երիտասարդ հոր ընտանեկան երջանկությունը:



ՌՈՉԱ ԱԼԲԵՐՏԻ ՔԵՐՈՒՆՅԱՆԸ ծնվել է Կունայրիում, 1972 թ. հոկտեմբերի 9-ին: Սովորել է № 18 դպրոցում, ցուցաբերել հակում ու սեր գույների, ձևերի, մոդելների հանդեպ: Միտում էր կարունքը: Ցամալը վերջացնելուց հետո որոշել էր սովորել: Վերջացրեց, բայց չհասցրեց նպատակին հասնել: Դեկտեմբերի 7-ին քրոջ և եղբոր հետ գտնվում

էր տանը, Հեղափոխության հրապարակի № 1 շենքում:

Քույրը՝ ՌԱՅԻՍԱ ԱԼԲԵՐՏԻ ՔԵՐՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1973 թ. սեպտեմբերի 2-ին: Քայլում էր քրոջ հետքերով, նույնպես որոշեց կար ու ձև սովորել: Ամբողջ օրը նրանք երկուսով նկարում էին, կրտրատում, կարում: Չարաբաստիկ այդ օրը նույնպես չհասկալից այդ օրինաչափությունը: Նրանք տանն էին, երկուսով խնամում էին իրենց սիրելի եղբորը:

ՍԵՂՈՒՆ ԱԼԲԵՐՏԻ ՔԵՐՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1985 թ. հունիսի 20-ին:



ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

ՈՐՀԱՍՍԱԿԱՆ այս օրերին «Հարստանի ֆիզկուլտուրնիկ» հեռախոսահամարներով զանգահարում են մարզական բնագավառի տասնչափ աշխատողներ, ցավակցություն հայտնում երկրաշարժից տուժածների հարազատներին, պատմում, թե կոչվեցին ինչպիսի աշխատանքներ են տարել՝ միաժամանակ առաջարկելով իրենց օգնությունը:

Ստորև ներկայացնում ենք նրանցից մի քանիսի խոսքերը:

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ («Արագած» ալպինիստական ակումբի դիրեկտոր)։—Դժվար է բառերով նկարագրել այն ինչ որ ասորումները, որ ունեցան Լեհիսկական եկամտահարստայն ալպինիստները աշխատանքային առաջին օրերին: Փլատակներ, ստանձին շենքերից կախված պանելներ, որոնք ուրոր է ենթակա են փլուզման, կիսավեր շինություններ ու այդ բոլորի տակ մարդիկ... Սակայն նրանք, որ եկել էին կոչվեցին ինչպիսի հետ, իրենց մեջ ցավը խեղդելու ուժ գրտան և սկսեցին փաստակների տակից հանել ողջ մնացածներին: Պետք չէ թվարկել բոլորին. նրանք մի մարդ են և յուրաքանչյուրը կատարեց ու կատարում է իր սրբազան պարտքը: Մեզ են միացել նաև Միության տարբեր քաղաքներից ժամանած 130 ալպինիստներ՝ Մոսկվայի ալպինիզմի վարչության պետի տեղակալ Վոլոդյա Կառնենկոյի գլխավորությամբ: Շուտով Լեհիսկական կամանան Էվերեստի հաղթահարման մասնակից Վալենտին Շուպինը (ինքնն գրառյան իր խմբով), Ուկրաինայի և այլ քաղաքների ալպինիստներ:

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ (արհմիությունների ԿՅՄԸ-ի կենտրոնական մարզադպրոցի դիրեկտոր)։—Մեր կոչվեցին մի շարք մարդիկ այս օրերին Լեհիսկական փրկարար գործունեություն են ծավալել:

Մեր կոչվեցին մտահոգված է նաև ողջ մնացածների ճակատագրով: Ուտի որոշել ենք (և արդեն պատրաստ է) մեր մարզադպրոցից տրամադրել բոլոր նրանց, ովքեր ցանկություն կհայտեն օրեսանկու մեզ մտո: Ինչ վերաբերում է լեհիսկական պատահի մարզիկներին, նրանք կարող են իրենց պարսպամուկները շարունակել մեր մարզօջախի սրահում: Անհրաժեշտության դեպքում տուժած վայրերի դպրոցներին կտրամադրենք գույք ու հանդերձանք: Կանենք ամեն ինչ՝ թեթևացնելու Լեհիսկական և մյուս բնակավայրերի մարզիկներին, մարզիկներին, նրանց ծնողներին հոգալ:

Վ. ԽԱՆԱՄԻՐՅԱՆ (խաղային մարզաձևերի հասցրտակական ՄՐՎԴ-ի դիրեկտոր)։—Մեր և մեր մասնագիտական մարզական հանրապետական ՄՐՎԴ-ի (դիրեկտոր՝ Վ. Թաթարյան) կոչվեցին (երկու դպրոցներն էլ գտնվում են միևնույն շենքում) վերցրել ենք Լեհիսկականից եկած 50 ընտանիքների շեֆությունը՝ նրանց տեղավորելով մարզօջախի հյուրանոցում: Չնայած Կարմիր խաչի ընկերությունից նրանք հագուստներ ստացել են, բայց մենք էլ ավելացրել ենք մեր սեփականը: Ապահովում ենք սննդով, հոգում բոլորի կարիքները, թեթևացնում նրանց փշուրը: Երկու մարզօջախների աշխատողների երկօրյա աշխատավարձը հատկացրել ենք տուժածներին:

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ (Ղափանի շրջանային սպորտկոմիտեի նախագահ)։—«Այն, ովքեր վերցրել ենք Ղափանի մարզակոմիտեից տուժածների ֆունդին է փոխանցել 300 ոտրլի: Իրենց երկօրյա աշխատավարձը օգնության նպատակին են հատկացրել քաղաքի կրթական մարմնամարզության, Քաջարանի արհմիությունների ԿՅՄԸ-ի և ժողկրթության համակարգի մարզադպրոցների աշխատողները:

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (Երևանի Սովետական շրջանի №2 մարզադպրոցի դիրեկտոր)։—Մեր կոչվեցին ստանձնել է Մարաշի օրթուպեդիայի և տրավմատոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտում բուժվող վիրավորների շեֆությունը: Խնամում ենք նրանց, ապահովում սննդով, նաև՝ առօրյա հագուստով, իսկ օգնության ֆունդի հաշվից փոխանցել ենք 3000 ոտրլի: Մարզօջախի վեց մարդիկ ենք այս օրերին փրկարար աշխատանքներ են տանում աղետի շրջանում:



ԱՐՄԵՆԻԱ ՎԱՊՊԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ծնվել էր 1950 թ., Կիրովարդում: Կրթությունը ստացել է Խամվարում: Ավարտել էր երաժշտական ուսումնարանը և աշխատողների անցել երաժշտական դպրոցում: Արմենիան

ամուսնացավ և տեղափոխվեց Լեհիսկական: Աշխատանքի անցավ Ն. Տիգրանյանի անվան № 1 երաժշտական դպրոցում որպես դաշնակահար: Գրել Արմենիայի մասին, երբ նա այնու չկա, չափից սովելի ծանր է: Արմենիան ընկերասեր էր, ազնիվ և մարդամոտ: Ընկալում էր լավ ու գեղեցիկ կր: Ուներ ուրախ, ջերմ, անմիջական բնավորություն: Երիտասարդ կինը երկու երեխայի մայր էր: Միտում էր կյանքը և հավատով էր նայում զավիթին: 1988 թ. դեկտեմբերի 7-ի ճակատագրական օրը նա զրտնրվում էր տանը՝ Սարադարյան փողոցի № 26 շենքում: Անավոր երկրաշարժը հառավ անսպասելի և Արմենիան մահկանացուն կնքեց իր բնակարանի փլվածքների տակ:
Ս. ՎՐԱՅԱՆ
Աշխատանքային ընկերուհի

Պ Ե Տ Ք Է Տ Ո Կ Ա Լ

Շատ դառնություն ու վիշտ տեսած հայ ժողովուրդը ևս մեկ անգամ կանգնեց փորձության առջև: Գեղանքերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժն անախարհաբան վաճառքն ունեցավ: Մեկ ակերբարթում հողին հավասարվեց Սպիտակը, ավերվեց Լեհիսկանի, Կիրովականի քաղաքի շենքերի, գործարանների, ուսումնական հաստատությունների մեծ մասը, զոհվեցին հազարավոր մարդիկ: Աղետի շափե ալեհան մեծ է, որ դժվար է դրան որևէ բնութագիր տալ: Բայց մեր ժողովուրդը, հանդես բերելով ինքնատիրապետում և վրշտից իրեն չկորցնելու մեծ կամքի ուժ, դժբախտության հենց առաջին բաղնիքից շտապեց օգնելու վիրավորներին, փլատակների տակից դուրս բերելու ողբ մեացածներին, աշուն հանձնելու: Եվ մարդկանց հասկանալ կարելի է:

Ցնցվում ենք ամենքս, սա կայն, այս դժվարին պահին պետք է առկա, դրսևորել հոգու արիություն, կազմակերպվածություն ու միասնություն: Սանդձվել է մի իրավիճակ, երբ անհրաժեշտ է ամեն ինչ անել, բուժել արհավիրքի բազմ վերհեր:

Հանրապետության ստի կանգնած ողբ քննչության բլում էի չեն ես և աղետայիններին օգնելու պատաստակամ ֆիզիկատուրայի և սպորտի բնագավառի աշխատողները: Ֆիզիկայես

կոփված, ուժեղ, շատ փորձություններ տեսած այդ մարդիկ արդյունավետ կարող են գործել վերանորոգման, շինարարական և այլ աշխատանքներում: Եվ քող մեր մարզական կազմակերպությունների ղեկավարները մտածեն այդ հոգը, վիրիսի ուժի տեր մարդկանց բաժանել արդյունավետ օգտագործելու համար: Չեմ կասկածում, որ մարզադպրոցները և մրցասպարեզները ժամանակավորապես լիցած մարզիկներն ու ֆիզիկատուրայի կենտրոններն այս օգտագործության համար արդյունավետ օգտագործվեն: Մենք անհրաժեշտ ենք ի վիճակի:

Մանր օտեր են մեր ժողովրդի կյանքում: Սակայն մեծ միայնակ չենք: Մեզ հետ են խորհրդային բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները, սփյուռքի մեր հայրենակիցները, գրեթե ողջ աշխարհը: Քերես երբեք մեծ աշխատանքներ կանգնեցնեն, վշտակիցներն ու գործնական օգնության ձեռք մեկնողներ չեն ունեցել: Փորձության այս ժամերին էլ, սիրելի հայրենակիցներ, եկե՛ք միասնական լինենք, սփոփենք վիշտը ժողովրդյան և օգնենք ամուսններին ինչով կարող ենք:

Հ. ՇԱՀՐՆՅԱՆ

Աշխարհի և օլիմպիական խաղերի չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ



ԱՐՄԵՆՈՒՀԻ ԻՍԿԱՆԴԱՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մեծվել է 1976 թ. մարտի 16-ին: Սովորել է Օ. Կոպրիցյանի անվան դպրոցում: Խելոք, համեստ երեխա էր: Դեկտեմբերի 3-ին հիվանդացել էր և գնալով հիվանդանոց, ուր մարմ էր, խնդրում է նրան տուն գալ: Մի փոքր գրուցելով, Արմենուհին վերադառնում է տուն: Դա մոր հետ



ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ


Միրելի Արևիկ, որքան շուտ թառամեց քո գարուն կյանքը, ինչու՞ խաղարկեց քո պապան սրբը: Ամեն օր, երբ պատկում եմ քեզի ու փակում եմ աչքերս, իմ աչքի առաջ քո գեղեցիկ դեմքն է պատկերվում, քաղցր ժպիտը, խոսքերդ... Ախր դու դեռ շատ բան ունեիր անելու ու երազում էիր կրթել ու դաստիարակել աշակերտներ: Միանգամից փշուր-փշուր եղան երազանքներդ՝ մնալով դպրոցի փլատակների տակ:



ՔԱԳԱՄԻԿԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Քազմաթիվների նման սեփական բնակարանի փլատակների տակ իր մահկանացուն կրեց ԿԱԴՐԻՆԵ ԺԻՐԱՅԻՐԻ ՍՈՒԼ ԹԱՆՅԱՆԸ (ծնվ. 1960 թվական):

Երիտասարդ մայրը չկարողացավ իրականացնել միակ զուգակի սպազայի համար հյուսած վարդագույն երազները: Հետևապես, թե ինչ հաջողությունների հասան երաժշտական սպորտ հասնախոյ իր սա-



ԺՈՐԱ ԲԱԳՐԱՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԺՈՐԱ ԲԱԳՐԱՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնվել էր 1932 թ. Լեհիսկանում: Երկար տարիներ աշխատեց Կուկաշիցի անվան ժամկառնարկից ֆարքիկալում: Կողեկտիվում հարգված էր իր մարդկային, անկեղծ, անմիջական բնավորության համար: Կյանքի բազմաթիվ փորձություններ բաժին ընկան նրան, իսկ ամենամանրը թերևս ոտքի գրկվելն էր: Երկու թոռները պապի աչքի լույսն էին, որոնց ամենացորեկ նիրվեց կյանքի վերջին տարիներին:



ԱՎԱԳ ԹՈՒՐ ԿՐՄԱՆ ԵՐ ԿԱՍԻ ԱՄՈՆԵՐ: ԺՈՐԱ ԳԱԳԿԻՎԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Ավագ թոռը կրում էր պապի անունը: ԺՈՐԱ ԳԱԳԿԻՎԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնվել էր 1983 թվականի հունվարի 28-ին, Լեհիսկանում: Փոքրիկ Ժորի կը խիստ հետաքրքրաբեր ու աշխույժ մի երեխա էր: Անընդհատ հարցնում էր, ցանկանում էր իմանալ, սովորել: Հնարած դպրոցական տարիքի չէր, բայց ժամերով կարող էր գրքերով հիանալ՝ գունազարդ նկարները դիտելով:



ՄԱՆՅԱՆ ՄԻՍԱԿԻ ԱՄԻՐՅԱՆԸ

Մանյան Միսակի Ամիրյանը ծնվել էր 1910 թվականին, Արևմտյան Հայաստանի Բուլանց գյուղում: Մանր, դաժան մանկություն բաժին ընկավ նրան: Եղեռնի ժամանակ կորցրեց հարազատներին: Պատանեկությունն անցավ որբանոցներում, սկզբում էլ՝ Իսթանբուլի մեծ թաղամասում, ապա Լեհիսկանի Սենտիկի կուլտուր աղջիկների որբանոցում: 1926 թվականից սկսեց աշխատանքային կենսագրությունը: Լեհիսկանի տեքստիլ կոմբինատում, իսկ 1974-ից աշխատում էր ժենդատանը որպես դասուցչուհի: Հետագայում, երբ արդեն տեսիլն անտեսուհի էր, ամբողջովին նը-

ՀԻՇԵՆՔ ՆԱԵՎ ՈՒՍՄԱՆ

Մ Ա Ս Ի Ն

Ահավոր երկրաշարժից տուժած շրջաններում արդեն ձյուն ու ձմեռ է, դեռևս կան անօթևան հազարավոր մարդիկ:

Հոգեկան ծանր դրության մեջ, բնականաբար, նրանք չեն կարող դիմադրել ձմեռային պայմանները: Հարկավոր է խուսափել նոր տղանոց և նրանց անմիջականորեն ապահովել կացարանով: Այդ նպատակի հասնելու մեր հանրապետություններն ունեն հայ միջոցներ: Ինչպես հայտնի է, Երևանի շրջակայքում գտնվում են այնպիսի անհատական կառուցած և անհատ շարժարկների պատկանող հազարավոր ամառանոցներ, որոնք մարդկանց ապրելու համար բոլոր պայմաններն ունեն: Երկրային այդ անամառանոցներն անմարդաբնակ են, ուստի առաջարկում են դրանք ժամանակավորապես ալիմադրել տուժածներին:

Որպեսզի այս գործը շուտափույթ և կազմակերպված կատարվի, առաջարկում եմ մեր հանրապետության ղեկավարությունները և շտապ ստեղծել կոորդինացիոն շանձնաժողով, որն անհապաղ զբաղվի սույն առաջարկության իրագործմամբ:

Եվս մի առաջարկ. քանի որ ամառանոցներում ժամանակավոր տեղափոխված երեխաներին անհրաժեշտ է նաև շարունակել ուսումը, բոլոր երեխաներին կողմնառում իրենց հարկի տակ ընդունել տուժած քնակավայրերի երեխաներին՝ զբաղող հանձնարարության օրինակ, պատրաստ եմ իմ տանը (հասցեն՝ Սևաստոպոլյան № 27) ընդունել 4 երեխայի:

ԱՐԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Հանրապետական կարգի անհատական բուժական, Հայրենական մեծ պատերազմի մասնակից

Մանյան Միսակի Ամիրյանը ծնվել էր 1910 թվականին, Արևմտյան Հայաստանի Բուլանց գյուղում: Մանր, դաժան մանկություն բաժին ընկավ նրան: Եղեռնի ժամանակ կորցրեց հարազատներին: Պատանեկությունն անցավ որբանոցներում, սկզբում էլ՝ Իսթանբուլի մեծ թաղամասում, ապա Լեհիսկանի Սենտիկի կուլտուր աղջիկների որբանոցում: 1926 թվականից սկսեց աշխատանքային կենսագրությունը: Լեհիսկանի տեքստիլ կոմբինատում, իսկ 1974-ից աշխատում էր ժենդատանը որպես դասուցչուհի: Հետագայում, երբ արդեն տեսիլն անտեսուհի էր, ամբողջովին նը-

Մ ե թ վ ի Շ տ ը

Աղետն եկավ Գյումրիս մոխրեց ու գնաց,
 Մտիս մեջը մենակ ծանր վիշտ մնաց,
 Աշխարհի գուրն հասավ սրբեց յարցունքս,
 Բայց, այս, տերը նորից տվեց մեզ սուգ-լաց:
 Տուն-տեղ չունինք, ապրուստ չունինք, հույս չկա,
 Տանապում ենք ցուրտ խավաբում, լույս չկա,
 Տեր, ո՛ր տաբար Գյումրուս գահ ու թափերը,
 Վե՛ր տվեցիր ու բալասան-բույս չկա:
 Պարզ երկնում փռուս ամպն է պար գալիս,
 Ամպն արտասվեց, ցեխն է դժոխք ցույց տալիս,
 Ջմուռն ցտիկն տնակի մեջ մահաշունչ,
 Գծբախտ տատն է որբուկների հետ լալիս:
 Բոլոր տեր են ու ոչ մի տեր էլ չկա,
 Այլոց հույսով գոյապայտարել չկա,
 Գծոխի մեջ տանապում ենք ամեն օր,
 Փրկության ձեռք մեկնող ախպեր էլ չկա...
 Կուգան օրեր, Գյումրիս էլի կշռող,
 Բախտի ետիք խաղաղ ծովում կլողա,
 Ես չեմ լինի, բայց իմ փռչին կհրեմլի,
 Երբ օրրանս նոր ծաղկունեմ փողփողա:

ՀՐԱՆՏ ՍԱՐԳՍՅԱՆ



ՉԱԳՐԱՄ ԳԱՐՈՒՆՆԵՐ

ԱՂԱՐԱԳԵՏՏԱՆ ԶԵՄՄԱ ՍԵՐՈՑՈՒՄԻ, ծնվ. 1959 թ., սովորել է Մալաթիական անվան դպրոցում: Ավարտել է N 10 գեղարվեստական ուսումնարանը, աշխատանքի անցել գույպեղենի ավեր ունեյր երկու շքանդ բալիկ մեր...

«Հիշողության» հերթական համարն են վերցնում: Կեր կին զգացնում է ցավը՝ ավերված օջախների, խորտակված երազների, թևաթափ, անձընող երկխոսների, որդեկորույս մայրերի... Եվ պատմությունը դարձող թերթի հերթական համարին ուզում են պահ տալ ցավը մի մոր, որի գեղեցկատես դուստրը Ջենմամ, չհասցրեց թուրքի երեսունը: Առավ իր չորս ու 5 տարեկան մանկիկներին և հեռացավ՝ հավերժի ճամփանով: Ժենյա մայրիկը այդ օրը գնացել էր նրանց տեսության, սակայն տիրոջ կամոք մա մնաց, որ հետո գրկի նրանց ցուրտ շիրիմները... Մեծաց, իսկ ակամքներում դեռ Ջենմայի կանչող ձայնն է: «Դու գիտես, աղջիկս, ես ե-

կա, — գրում է մայրը, — բայց տունը չկար, չբացել էր դեմքը զարդարող բարի ծախտ, մայրական թևերից տակ ծվարել էին երկու անձնամ հրեշտակները...»

ԷԱԱ և ԱՐՄԵՆ ԿԱՐԱԳԵՏՏԱՆՆԵՐԻ անունները չգրվեցին դպրոցական մատաններում, որին պահպան անհամբերությամբ էր սպասում Ջենմամ, գրվեցին սաղո, գրանիտ բարիքի վրա: «Հիմա ինչպես կսիրեմքի մայրական իմ սիրտը, — շարունակում է մայրը, — ինչպես կհաշտվեմ չարամ գարունների ցավի հետ: Ապրում են շիրիմները գորգորկու հագում են պահ տալ ցավը մի մոր, որի գեղեցկատես դուստրը Ջենմամ, չհասցրեց թուրքի երեսունը: Առավ իր չորս ու 5 տարեկան մանկիկներին և հեռացավ՝ հավերժի ճամփանով: Ժենյա մայրիկը այդ օրը գնացել էր նրանց տեսության, սակայն տիրոջ կամոք մա մնաց, որ հետո գրկի նրանց ցուրտ շիրիմները... Մեծաց, իսկ ակամքներում դեռ Ջենմայի կանչող ձայնն է: «Դու գիտես, աղջիկս, ես ե-



ԳԱՐՈՒՄ Կ ԶԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՎԱՐՈՒՆՆԵՐ

Ծնվել էր 1934 թվականին: Երկար տարիներ աշխատել էր որպես մանկավարժ: 1985 թվականից աշխատել էր «Հայկոտայ» բազայում որպես տնօրենի տեղակալ: Լավ ընտանիքի հայր էր, անիրավ ճանաչում, հարգված ու սիրված ընկեր: Սիրում էր մվագել և նվարել: Հոգեկան մեծ հանգրսույթում էր ստանում, երբ վրձին էր ձեռքը առնում: Գեղանկարչության աշխարհը վաղուց էր ընկած նրան: Բաց աշխարհը չէր փոխի իր մեկ տարեկան ՆԱԲԵԿԻ ծախտի հետ: Տեսնելով նրան, մտածում էր ամեն ինչ, ու ծախտը փայլում էր դեմքին:

Դեկտեմբերի 7-ին տուն էր կել նախաճաշելու թոռնիկի ու հարսի հետ ու... Երեքով զոհ դարձան անավոր աղետին: Փլատակների տակ մեկ օր ու կես իր շնչով տաքացրել էր խեղդված թոռանը: Վերջին բառերը, որ լսել էր որդին Երանից այս էին՝ «Չկարողացա փրկել ընտանիքը, տղա ջան»: Երևանի հիվանդանոցներից



Մեկում թիշկները յոթ օր պայքարում էին նրա կյանքի համար, բայց մահը գործը գտնվեց:

ՀԱՍՄԻԿ ՄԵՐՈՒԹՅԱՆԻ ՎԱՐՈՒՆՆԵՐ

Ծնվել է 1968 թ. Արթուրում, ավարտել Երևանի մանկավարժական ինստիտուտի նախադպրոցական բաժնի: 25 տարին դեռ չբողոքած, լրակցաց ու հեզ այս աղջիկը նոր էր ապրում մայրության քերկրանքը, լսում իր անդրամիկ որդու թողով բառերը: Ներքին հուզմունքով ապաստում էր երկրորդ զավակի աշխարհ գալու, բայց չհասցրեց: Մոմի պես նուրբ էր, մոմի պես էլ հազվեց-գնաց՝ թողնելով միայն բարի հիշատակ:

ՆԱՐԵԿ ՍԱՄՎԵԼԻ ՎԱՐՈՒՆՆԵՐ

Այս ծովային մանկիկը ութ ամսյա կենսագրու թյուն ունեցավ: Ով գիտի, թե ինչ մարդ կդառնար, որքան կուրախացներ իր ծնողներին: Ծառ էր սիրում պատկիկին, կապված էր նրա հետ, ու փարվում էր նրան իր փառիկ թաթիկներով: Նրան փարված էլ հրաժեշտ տվեց կյանքին:



ՍՎԵՏԿԱ և ՄԱՐՍԻՄԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել էր 1976 թ. հոկտեմբերի 26-ին, Լեհիմակառնում: Ախտության N 1 միջնակարգ դպրոցի առաջավոր աշակերտուհին դեռ շատ ցուպատվիքներ ուներ կյանքից: Անչափ սիրում էր երգ-երաժշտությունը և ցանկանում էր մանկավարժ դառնալ, իր կյանքը կապել երիտանրի հետ: Դեկտեմբերյան այդ դժնդակ օրը Սվետլանան չէր ուզում դպրոց գնալ: Կանխազգուս էր ողբերգականը: Հակառակ զգացումներին, գրեց դասի և անել երկրաշարժի ժամանակ մնաց փրկված աստիճանների տակ:



Խոր վշտի մեջ թողնելով ծրարներին ու հարազատներին:

ՀՐԱՆՈՒԹ ԼՈՎԶԱՆՆԵՐԻ ՄՎՐՏՅԱՆ

Ծնվել էր 1963 թ. Լեհիմակառնում, սովորել էր N 10 միջնակարգ դպրոցում, զուգահեռ ավարտել նաև երաժշտական ուսումնարանը: Դպրոցն ավարտելուց հետո սովորել էր մանկավարժական տեխնիկումում: Ամուսնացած էր, ուներ երկու երեխա: Հրանտը աշխատում էր Չկարփի անվան կարի ֆարքիկայում որպես կարող բանվորուհի: Այստեղ էլ կնքեց իր մահկանացուն՝ որք թողնելով երկու անչափահաս մանկիկներին:



ՀՐԱՆՈՒԹ ԿԱՐԱԳԵՏԻ ՆԱԶԱԳԵՏՅԱՆ

Ծնվել է 1983 թվականին, ապրիլի 22-ին, Լեհիմակառնում, բանվորի ընտանիքում: 1974 թվականից աշխատում էր կահույքի ֆարքիկայում և բազմիցս արժանացել էր խորախոսանքների, պարգևների: Ընտանիքին նվիրված մայր էր, բարի ու մաքրա-

ՀՐԱՆՈՒԹ ԿԱՐԱԳԵՏԻ ՆԱԶԱԳԵՏՅԱՆ

մտ կին: Մաքրության, գեղեցկության ու ծաղիկների մի վանդ էր: Տանը ամեն ինչ խոսում էր նրա նուրբ ճաշակի մասին: Աշխարհը սաես իրեն էին տվել, երբ ծնվել էր առաջին թոռնիկը՝ Էլյան, մանկաբու էր նրա հետ, ու ծվարում էին աչքերը երազկոտ: Անընդհատ կրկնում էր, որ թոռնիկը պարուհի է դառնալու, ապաստում էր այդ օրվան, բայց...

ՀԱՏՈՒԿ ՇՏԱՐՈՒՄ

ՀՍՀ սպորտպետեկոմում գործող փրկարար աշխատանքների կազմակերպման հատուկ շտաբը տեղեկացնում է, որ հանրապետության մարզական կազմակերպությունները շարունակում են օգնությունը երկաշարժից առնամենին: Այսպես, Զարեհցավանի սպորտկոմի մարզադպրոցը մասնակցել է Լեհիմակահի N 20 դպրոցի շենի փլատակների մաքրման աշխատանքներին: Լեհիմակառնում, Սպիտակում և Եսլաբեղ գյուղում հույնախի աշխատանք է կատարել Երևանի մարզպետարանի թենիսի օլիմպիական ռեզերվի մարզադպրոցի կոլեկտիվը: Սպիտակում երանց հաջողվել է փրկել 6-ամյա մի աղջկա և 8 ամսական մի երեխայի:

ԱՐԻՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՄՔ

Այսօր մեր երկրի բոլոր գիտնականները մասնագրված են Հայաստանում տեղի ունեցած վիթխարի աղետով ու զրա հետևանքների արագ վերացումով:

Այս ծանր ու դժվարին օրերին խորհրդային գիտնականները համախմբված, ջանք չեն խնայում օգնելու հայ գիտնականներին: Հանրահայտ է, որ Հայաստանը աչի է բեկել միշտ իր խոշոր, համաշխարհային համբավ ունեցող գիտնականներով: Այնտեղ են աշխատում նաև գեներալիայի գծով իմ մի քանի աշակերտները, որոնք վիթխարի գործ են կատարում այդ բնագավառում:

Ստեղծված ողբերգական վիճակում հայ գիտնականներին, գեներալիայի մասնագետներին՝ ցանկանում եմ արիություն և կամք, օրպեսզի կարողանան հաղթա

հաճել այդ դժվարությունները, իրենց ուշադրությունը կենտրոնացնել անհրաժեշտ բույսերի ու կենդանիների օգտագործումով նոր տեսակներ ու ցեղատեսակներ ստանալու գործում, ինչպես նաև հետևել մարդու ծառան գական հիվանդության կանխման պրոբլեմներին:

Ներայրական սիրա զգացումներով ցանկանում եմ հնարավորին չափ արագ զուրս գալ ծանր վիճակից Քանուն խորհրդային գիտության հաղթանակի ու նվաճումների:

Ն. ԳՈՐԻՍԻՆ Ակադեմիկոս, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կենտրոնների, էվոլյուցիոն մորֆոլոգիայի և էկոլոգիայի ինստիտուտի գեներալիայի լաբորատորիայի վա. ռիշ 17 ղեկավարների 1988 թ.

ԺՈՒՆԱՅԻՆ ՄԵՋ ՀՆՏ ԵՆ ՄԵՐ ԳՈՐԾԵԿՆԵՐՆԵՐԸ

Ամբողջ վշտի, անանոթ ցավի այս օրերին շեն դադարում ցավակցական հետազոտող մեր երկրի ժողովուրդական կազմակերպություններից՝ ԽՍՀՄ ժողովուրդների միությունից, Մոսկվայի, Ուլյանովսկի, Բելոռուսիայի, Լիտվայի, Լատվիայի, Վրաստանի, Լատվիայի, Ռազբելստանի, Բրեստի, Կուրսկի, Օմսկի, Կուրգանի և բազմաթիվ այլ ժողովուրդական կազմակերպություններից: Մեր գործընկերները պատրաստակամություն են հայտնում նյութապես, բարոյապես սատար կանգնել, կիսել հայ ժողովրդին հասած ծանր վիշտը, ամոքել աղետյակների հարսազատներին, մերձավորներին:

Հայաստանի ժողովուրդների միությունը ստանձնել է Երևանի մանկական հիվանդանոցների շեֆությունը: Աղետից տուժած ժողովուրդներին և նրանց ընտանիքներին օգնություն ցույց տալու համար ստեղծվել է շտաբ, որը կը տնօրինի 700953 Սպանդարյանի սոցկենցազորանկի հաշվին փոխանցված գումարները:


Ժողովուրդական այն կազմակերպությունները և անհատները, որոնք հնարավորություն ունեն օգնելու աղետյակներին՝ ժողովուրդներին, գումարը կարող են փոխանցել նշված հաշվին կամ Հայաստանի ժողովուրդների միություն: Հեռախոսներ՝ 58-12-76, 58-14-47, 58-14-72:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՒՆԱՅԻՆՄԱՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



ՄԿՐՏԻՉ ՍԱՄՍՈՆԻ ԴԱՎԹՅԱՆԸ ծնվել է 1927 թվին, Լեհիստանի Լադաբո: Վաղ հասակից զբիվելով հայրական հոգատարությունից և զգալով բնատեղի տեսն. սակն վառ վիճակը, 1941-ին բեղունվում է աշխատանքի կոշիկի ֆաբրիկայում: Մկրտիչը սիրում էր աշխատանքը, առաջավոր բանվոր սիրված ու հարգված մարդ էր: Նրա մոտ էին իրենց աշխատանքային առաջին ֆայերն սկսում ձեռնարկություն մտած շատ պատանիներ: Անցան զրծվարին տարիները, Մկրտիչը ամուսնացավ, բնտանիք կազմեց՝ իսկական հայի բնտանիք: Նա ամբողջ հոգով նվիրված էր իր բնտանիքին: Նրա կյանքի միակ նպատակն էր՝ առնել իր զավակներին երջանիկ ու բախտավոր: Չնայած որ բազմանդամ բնտանիքի հայր էր, սակայն նրա մեջ ղեռ չէր մարել կրթություն ստանալու ցանկությունը: 1967 թ-ին բեղունվեց բեքի արդյունաբերական տեխնիկում: Անկախությունը նրան վստահեց ավագ արտանագետի պաշտոնը:

Մեծ եռանդով էր աշխատում Մկրտիչը, հետևում յուրաքանչյուր բանվորի աշխատանքին, խորհուրդներ էր տալիս նրանց: Նա իր գործի մեջ վարպետ էր, սիրում էր աշխատանքի մեջ միշտ տեսնել նորն ու զեղեցիկը: Մկրտիչը երկար ու եռանդուն աշխատանքային տարիների բերքացում կատարության կողմից արժանացել է մի շարք խրատանքների ու պարգևների: Հանախ էր կրկնում «մագերս ֆաբրիկայի ներսում սպիտակեցիկ»: Սակայն ինչ գիտենալ կյանքում ու եռանդով լեցուն այդ մարդը, որ կյանքի բեքն էլ կորսվելու էր նրա պատերի ներսում, որ իր երազանքները բազմելու են փլատակների տակ:



Նկար N 55 և 56—1988 թ. ղեկավարների 7-ի երկրաչառի ժամանակ առաջացած խզումը, որը ձգվում է Գեղասար գյուղից մինչև Սպիտակ:

Լուսանկարներ՝ Ա. Մակարյանի

Նկար N 57— Լուսանկարների շրջանի Առաջին գյուղի մոտ առաջացած սելանոգրավիտացիոն բառակատրան (փլուզումը):

Լուսանկար՝ Ս. Գուլյանի